Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
օգոստոսի 5 -ի N 486 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ՈՒ ՀԱՆԳՍՏԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	**Ծրագրի նպատակը**	1. ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքի 3-րդ թաղամաս, 15-րդ փողոց, թիվ 9 շենք հասցեում գտնվող Սոցիալական աջակցության կենտրոնի վերանորոգման աշխատանքներ 2. «Հույսի ավան» թաղամասում գտնվող Ժամանցի և հանգստի տան վերանորոգման աշխատանքներ
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Զեե, Ֆելդշտրասսե 9)
4.	**Ծրագրի կատարողը**	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	1. ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնք՝ սոցիալական բնագավառ 2. Երևան քաղաք, «Հույսի ավան» թաղամաս՝ սոցիալական բնագավառ
6.	**Ծրագրի բյուջեն**	Ծրագրի բյուջեն կազմում է 21,826.637 դրամ՝ 1. 11,960,200 դրամ 2. 9,866,437 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	1. ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքի Սոցիալական աջակցության կենտրոն 2. «Հույսի ավան» թաղամասի Ժամանցի և հանգստի տուն

8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	1. Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2019 թվականի հուլիսի 18-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում: 2. Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2019 թվականի հուլիսի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում:
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1. 2019 թվականի հուլիսի 18-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել Սոցիալական աջակցության կենտրոնի վերանորոգման աշխատանքներ՝ 11,960,200 դրամ ընդհանուր արժողությամբ: 2. 2019 թվականի հուլիսի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացնել Ժամանցի և հանգստի տան վերանորոգման աշխատանքներ՝ 9,866,437 դրամ ընդհանուր արժողությամբ:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գները**	1. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Սոցիալական աջակցության կենտրոնի վերանորոգման աշխատանքների իրականացման մասին պայմանագիր, որի արժեքը կազմում է 11,960,200 դրամ: 2. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Ժամանցի և հանգստի տան վերանորոգման աշխատանքների իրականացման մասին պայմանագիր՝ 9,866,437 դրամ ընդհանուր արժողությամբ:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ**	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Ներկայացնել հաշվետվություններ. Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ